ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Անցած տարվա նոյեմբերի 23—25-ը Երևանում տեղի ունեցավ «Անհատի կոնցեպցիան զարգացած սոցիալիզմի դրականության մեջ» գիտական կոնֆերանսը, որը կազմակերպել էին ՍՍՀՄ ԳԱ Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտը և ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը Հայաստանի գրողների միության, համամիութենական «Գիտելիք» ընկերության և հանրապետական «Գիտելիք» ընկերության հետ համատեղ։

Կոնֆերանսը ներածական խոսքով բացեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Գ. Լոմիձեն։ Կոնֆերանսի մասնակիցներին ողջունեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Կ. Դալլաքյանը։ Իր ելույթում նա խոսեց այն մեծ նշանակության մասին, որ ունի քննարկվող պրոբլեմը սովետական գրականության հետագա զարգացման համար։ Կ. Դալլաքյանը հանրապետության ղեկավարության անունից հաջողություն մաղթեց կոնֆերանսի աշխատանքներին։

Կոնֆերանսում լսվեցին Մոսկվայի, Հայաստանի և միութենական մյուս հանրապետությունների գիտնականների երեք տասնյակի հասնող զեկուցումներ, որոնք շոշափում էին կոնֆերանսի օրակարգում դրված խնդրի ամենատարբեր կողմերը։

Անհատի ձևավորման համար սկզբունքային նշանակություն ունի պատմության և ժողովրդի պատմական փորձի ըմբռնումը։ Բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Սարինյանը (Երևան) իր «Պատմություն, արդիականություն, անհատ» զեկուցման մեջ խոսեց այն դերի մասին, որ անհատի ձևավորման գործում ունի սոցիալիստական հասարակության պատմական փորձը։ Իսկ բանասիրական գիտությունների դոկտոր Մ. Լևչենկոն (Օդեսա) «Ժամանակների կապը և սոցիալիստական անհատի ձևավորումը» զեկուցման մեջ խոսեց սովետական մարդու կերպարի ձևավորման համար սովետական ժողովուրդների հայրենասիրական և հեղափոխական ավանդույթների մեծ նշանակության մասին։

Բանասիրական գիտությունների դոկտոր Ռ. Յուսուֆովը (Մոսկվա) կոնֆերանսի մասնակիցներին պատմեց «ՍՍՀՄ ժողովուրդների գեղարվեստական ժառանգությունը և արդիականությունը» կոլեկտիվ մենագրության մասին, որ հրատարակության է պատրաստում Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտը։

Բանասիրական գիտությունների թեկնածու Ն. Վորոբյովայի զեկուցումը նվիրված էր «Ժողովրդական կերպարը պատմական վեպում» թեմային։

Բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Աղաբաբյանը (Երևան) հանդես եկավ «Հումանիզմը գրականության մեջ անհատի կոնցեպցիայի հիմքն է», իսկ բանասիրական գիտությունների դոկտոր Ե. Զալեսսկայան (Մոսկվա)՝ «Գրականությունը և կոմունիստական հասարակության մարդու ձևավորումը» զեկուցումով։

Սոցիալիստական հասարակության անհատի ձևավորման համար առաջնահերթ նշանակություն ունի անհատի և աշխատանքային կոլեկտիվի հարաբերության, աշխատանքի վերափոխիչ նշանակության խնդիրը։ Գիտատեխնիկական հեղափոխությունը նոր երանգ է մտցնում անհատի և շրջապատի հարաբերություններում։ Գրականության մեջ այս հարցերի արտացոլման մասին խոսեցին բանասիրական գիտությունների դոկտոր Օ. Բականիձեն (Թբիլիսի) «Մարդը և աշխատանքային միջավայրը ժամանակակից վրաց արձակում» և բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Մանուկյանը (Երևան)՝ «Աշխատանքի մարդու կերպարը սովետահայ արձակում» զեկուցումներում։ Բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Կովալկին (Մոսկվա) կանգ առավ «Գիտատեխնիկական հեղափոխությունը և անհատի զարգացումը» խնդրի վրա։

Առանձին քննարկման առարկա դարձավ գրական ստեղծագործության հեղինակի, նրա գաղափարական դիրքորոշման և ստեղծագործական կառուցվածքում նրա դերի հարցը։ Բանասիրական գիտությունների դոկտոր Ար. Գրիգորյանը (Երևան) իր զեկուցման մեջ քննեց քնարական ստեղծագործության կառուցվածքում հեղինակի անհատականության արտահայտության տարբեր ձևերը, բանասիրական գիտու-

թյունների թեկնածու Ն. Աղալյանը՝ «Հեղինակ-հերոս» իրավիճակի և նրա մարմնավորման սկզբունքները։ «Հերոսի սոցիալական ակտիվությունը և գրողի դիրքորոշումը» հարցին էր նվիրված բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Ալիբեկովայի (Բաքու) զեկուցումը։ Բանասիրական գիտությունների թեկնածու Կ. Սուլթանովը (Մախաչկալա) իր զեկուցման մեջ խոսեց պատմողի կերպարի մասին՝ հենվելով Հյուսիս-կովկասյան արձակի փորձի վրա։ Գևորգ Էմինի ելույթը նվիրված էր բանաստեղծի անհատականությանը, նրա քաղաքացիականությանը և ազգային նկարագրին։

Կոնֆերանսում քննարկված կենտրոնական հարցերից մեկը գրական հերոսի ազգային առանձնահատկությունների խնդիրն էր։ Այդ թեմային էին վերաբերում բանասիրական գիտությունների թեկնածու Զ. Ավետիսյանի (Երևան) «Հերոսի ազգային հոգեբանության առանձնահատկությունները ժամանակակից հայ արձակում», բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Խուսաինովի (Ուֆա) «Բաշկիրական գրականության պոեզիայի նոր միտումները», բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Վանյուշևի (Իժևսկ) «Ընդհանուրը և առանձնահատուկը Պովոլժիեի ժողովուրդների գրականության հերոսի բնավորության մեջ» զեկուցումները։

Կոնֆերանսում մտքերի աշխույժ փոխանակություն առաջացրեց բանասիրական գիտությունների թեկնածու Դ. Ուռնովի (Մոսկվա) «Գրողի դիրքորոշումը և ժամանակակից գաղափարական պայքարը» զեկուցումը։ Գրականագետը էստոնական երիտասարդական արձակի վերջերս լույս տեսած ժողովածուի օրինակով ցույց տվեց գրականագիտական բնորոշումների հստակության կարևորությունը, մի սկզբունք, որ բավական հաճախ աչքաթող է արվում։

Զեկուցումների մի մեծ խումբ նվիրված էր ժամանակակից գրականության մեջ ի հայտ եկած նոր միտումների քննությանը։ Ռ. Կապակովան (Մոսկվա) «Ժամանակակից արձակի հերոսի բարոյական որոնումները» զեկուցման մեջ խոսեց «գյուղական արձակի» մասին։ Բանասիրական գիտությունների թեկնածու Հ. Մարգունին (Երևան) «Մարդ—բնություն պրոբլեմի ժամանակակից ասպեկտները» զեկուցման մեջ, դարձյալ «գյուղական արձակի» օրինակով, քննեց մարդու և բնական միջավայրի նոր հարաբերությունների հարցը։ Բանասիրական գիտությունների թեկնածու Ե. Ալեքսանյանի (Երևան) զեկուցումը վերաբերում էր ժամանակակից հայ արձակում անհատի ինքնարտահայտման գեղարվեստական ձևերին, բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Վավերեն (Ռիգա) զեկուցեց լատիշական արձակում անհատի պատկերման սկզբունքների մասին։ Ժամանակակից արձակի և պոեզիայի պոետիկային էին նվիրված բանասիրական գիտությունների թեկնածուներ Ս. Խիտարովայի (Մոսկվա) «Ոճերի դինամիկան ժամանակակից արձակում», Լ. Կիրակոսյանի (Երևան) «Անհատի կոնցեպցիան արձակի գեղարվեստական կառուցվածքում», Ն. Շլյախովայայի (Օդեսա) «Հերոսի զգացմունքների և վարքագծի դիալեկտիկան (բնավորության ձևավորման պոետիկայի հարցերից)», Ա. Եղիազարյանի (Երևան) «Ժամանակի կոնցեպցիան և անհատի կոնցեպցիան», Ռ. Պոդգայեցկայայի (Մոսկվա) «Գեղարվեստական մտածողության պատմականությունը քնարական պոեզիայում», Դ. Գասպարյանի (Երևան) «Հերոսի տիպականացման առանձնահատկությունները արդի հայ գրականության մեջ» զեկուցումները։

Կոնֆերանսի աշխատանքներն ամփոփեց ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Գ. Լոմիձեն, եզրափակման խոսք ասաց ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի դիրեկտոր էդ. Ջրբաշյանը։

Մ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ